



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱՎԱՆ ՆԻՍՏԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ

18.03.2021թ.

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 9 անդամները:

Բացակայում են Հ. Գրիգորյանը, Տ. Եփրեմյանը, Ն. Վարդանյանը, Գ. Երիցյանը, Ա. Փանոսյանը, Մ. Պողոսյան:

Նիստը վարում է համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյան

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են՝
համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ս. Մուրադյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժնի պետեր Վ. Բարսամյանը, Բ. Բալբաբյանը, Ա. Ծերունյանը, Ա. Զաքարյանը, Ս. Բալբաբեկյանը, Գ. Աֆյանը և գյուղերի վարչական ղեկավարները:

Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյան

Հաստատել համայնքի ավագանու թիվ 2 հերթական նիստի օրակարգը՝

1. «ԲԱՐՄԱՔ» ՍՊԸ-ին աղբահանության վճար վճարողների հաշվառումը, աղբահանության վճարը հաշվարկելը վերապահելու մասին:
2. Չարենցավան համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները, դրանց իրականացման կարգը և սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրների լուծման չափորոշիչները սահմանելու մասին:
3. Չարենցավան համայնքի ավագանու 2004 թվականի մարտի 26-ի թիվ 3/11 որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին:
4. Չարենցավան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 55 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
5. Չարենցավանի համայնքապետարանի, Չարենցավան համայնքի «Մշակույթ», Չարենցավան համայնքի «Մաքուր Չարենցավան» և «Ալափարսի մշակույթի տուն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների սեփականություն համարվող արխիվային փաստաթղթերի սեփականության իրավունքը պետությանը փոխանցելու մասին:
6. Համայնքի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման կանոնները հաստատելու մասին:
7. Չարենցավան համայնքի 2020 թվականի բյուջեի տարեկան եկամուտների և ծախսերի հաշվետվության մասին:
8. Չարենցավան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 56-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
9. Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:

10. Չարենցավան համայնքի ղեկավարի տարեկան հաշվետվությունը 2020 թվականի համայնքի զարգացման հնգամյա ծրագրի իրականացման մասին:
11. Չարենցավան համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը հաստատելու մասին:
12. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները աճուրդային կարգով օտարելու թույլտվություն տալու մասին:
13. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները ուղղակի վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:
14. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները վարձակալության ու կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:
15. Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները նվիրատվության եղանակով վարձակալին օտարելու համաձայնություն տալու մասին:

Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյան

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը օրակարգային հարցի վերաբերյալ:

Կողմ -9

դեմ - 0

ձեռնպահ -0

Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

1. «ԲԱՐՄԱՔ» ՍՊԸ-ին աղբահանության վճար վճարողների հաշվառումը, աղբահանության վճարը հաշվարկելը վերապահելու մասին:

/Ձեկ. Վ.Չիլինգարյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով **առաջարկում եմ** վերապահել **«ԲԱՐՄԱՔ»** սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն աղբահանության վճար վճարողների հաշվառումը, աղբահանության վճարը հաշվարկելը, ինչպես նաև այդ վճարի գանձումը (մուտքագրումը) համայնքի բյուջե կամ արտաբյուջետային հաշվի: Պահանջել **«ԲԱՐՄԱՔ»** սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունից ներկայացնել համայնքի ղեկավարին ամսական հաշվետվություն՝ աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման գործառույթների իրականացման արդյունքների վերաբերյալ:

Համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Չիլինգարյան

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ-9

դեմ - 0

ձեռնպահ -0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/: